Հոկտեմբերի 3-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 15 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման և բուժկետի տարածքի բարեկարգման, «Վարդենիս – Մարտակերտ» ավտոճանապարհի Սոտք - Քարվաճառ խաչմերուկի 1-ին տեղամասի կամուրջների կառուցման տեխնիկական հսկողության և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Չափառ գյուղի նորակառույց դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերման ծրագրերը.

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագիրը.

«Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցման և «ՖաբԼաբ արհեստանոցլաբորատորիա» ծրագրերը.

«Սատար» հաշմանդամների հասարակական կամզկերպության կողմից իրականացվող՝ Անվասայլակների ներկրման և մասնագիտացված բաշխման ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վանևան համայնքի ոռոգման ջրի խորքային հորի վերականգնման, Գավառ, Վարդենիս, Կարճաղբյուր և Այրք համայնքներում խաղահրապարակների տեղադրման, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան և Տաշիր քաղաքների բուժհաստատությունների վերանորոգման և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքի թիվ 10 միջնակարգ դպրոցի մասնակի վերանորոգման ու «Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի թեքահարթակի կառուցման ծրագրերը.

«Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ապահով տուն անապահով ընտանիքին» ծրագիրը.

«Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2015-2018 թվականներին իրականացվող ծրագիրը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Տրետուք համայնքում ջրագծի կառուցման ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ ու բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: